«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ
Հ.Ս.ՉԱՔՈՅԱՆ
21 հոկտեմբեր, 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Միհեր Մերուժանի Օթարյանի «Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը. 00. 02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի, Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի, **Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության, Ագրարային էկոնոմիկայի ամբիոնների** 2024 թվականի հոկտեմբերի 21-ին (արձանագրություն N 2) կայացած համատեղ նիստում, մասնակցությամբ՝ դոցենտներ Ա.Հ. Հարությունյանի, Հ.Վ. Հովհաննիսյանի, Հ. Հ. Գրիգորյանի, Ա. Ս. Շահբազյանի, Լ. Ա. Աղասարյանի, Ն. Կ. Գրիգորյանի, Ս. Վ. Մելոյանի, Ծ. Բ. Խալաթյանի, դասախոսներ՝ Ա. Վ. Ղազարյանի, Մ. Է. Հովհաննիսյանի, Կ. Մալխասյանի, Լ. Եդիգարյանի, Վ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի, ամբիոնների ասիստենտներ Լ. Հ. Ծպնեցյանի, Լ.Ա. Վարդանյանի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման

համակարգի զարգացումը երկրի ժողովրդավարացման կարևոր ցուցանիշներից է, քանի որ այն հիմնված է բնակիչն երի մասնակցության և օրինականության սկզբունքների վրա: Ժողովրդավարական հասարակություններում իշխանությունն ավելի մոտ է քաղաքացիներին, ինչը խթանում է նրանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին: Տեղական մակարդակում համայնքի բնակիչները կարող են առանց միջնորդների ներկայացնել իրենց կարծիքներն ու կարիքները, ինչը ստեղծում է ավելի պատասխանատու և հաշվետու կառավարման համակարգ: Այս գործընթացը նաև նպաստում է քաղաքական մշակույթի ձևավորմանը, որտեղ մարդիկ ավելի Օակտիվ ներգրավվում են հանրային հարցերի քննարկման և որոշումների ընդունման մեջ, ուստի Հայաստանի դեպքում կարևորվում է տեղական ինքնակառավարման մարմինների դերը, որոնք պետք է լինեն արդյունավետ և վստահելի:

Ապակենտրոն կառավարման մոդել ունեցող պետություններում ռեսուրսների արդյունավետ կառավարումը հանդիսանում է սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական պայմաններից մեկը: Այլ կերպ ասած, երբ համայնքները ունեն ինքնիշխանություն իրենց ռեսուրսների օգտագործման հարցում, նրանք կարող են մշակել ավելի նպատակային և տեղայնացված ծրագրեր, որոնք համապատասխանում են իրենց յուրահատուկ կարիքներին: Սա ընդգծում է նաև տնտեսական զարգացման կայունությունը, քանի որ համայնքների բնակիչները զգում են իրենց մասնակցությունը տնտեսության աճին և կարողանում են վերահսկել տեղի զարգացման գործընթացները: Հայաստանում, որտեղ առկա են տարբեր տնտեսական մարտահրավերներ, կարևորվում է ռեսուրսների օպտիմալացումը և դրանց ուղղորդումը տեղական զարգացման ծրագրերի իրականացմանը, ինչը կբերի բնակչության կյանքի որակի բարելավման:

Այդ իսկ պատճառով Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը մեծապես կախված է տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներից և դրա արդյունավետության բարձրացումից: Այս բարեփոխումները ներառում են ֆինանսական անկախության մեծացում, համայնքային ծառայությունների բարելավում և

որոշումների ընդունման գործընթացներում բնակիչների ակտիվ մասնակցության խթանում: Հաջողված բարեփոխումները պետք է ստեղծեն հզոր, ինքնաբավ համայնքներ, որոնք կարող են զարգացնել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային ներուժը: Հայաստանում այս գործընթացը պահանջում է կոորդինացված ջանքեր պետական մարմիններից, մասնավոր հատվածից և ոչ կառավարական կազմակերպություններից, որոնք միասին կարող են ապահովել մի շարք ռազմավարական ծրագրերի իրականացում, որոնք կենտրոնացած կլինեն տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման վրա, ինչն էլ պայմանավորել է ուսումնասիրվող թեմայի կարևորությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ տեղական ինքնակառավարման (ՏԻ) համակարգի ձևավորման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների մշակումն է, որին հասնելու համար ատենախոսը նախանշել է հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- Որոշարկել տեղական ինքնակառավարման դերը տարածքային զարգացման գործում,
- Ուսումնասիրել տեղական ինքնակառավարման միջազգային փորձը,
- Գնահատել Հայաստանում վարչատարածքային բաժանման համակարգում իրականացված փոփոխությունները,
- Ուսումնասիրել ՀՀ-ում ՏԻՄ համակարգի ձևավորման պայմանները և ինստիտուցիոնալ հիմքերը,
- Բնութագրել տեղական ինքնակառավարման ներկա վիճակը Հայաստանում,
- Մշակել համայնքների ֆինանսական հնարավորությունների ընդլայնմանն ուղղված առաջարկություններ,

- Մշակել նոր մոտեցումներ՝ միջբյուջետային հարաբերությունների կարգավորման համար,
- Մշակել առաջարկություններ՝ ավագանու ինստիտուտի կայացման համար,
- Ներկայացնել առաջարկություններ՝ ՀՀ ՏԻՄ զարգացման հիմնուղիների կատարելագործման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալը.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների դերի գնահատմամբ որոշարկվել են տեղական բյուջեների ֆինանսական հնարավորությունների ընդլայնմանն ուղղված առաջարկություններ:

2. Մշակվել են ՀՀ տեղական բյուջեների հնարավորությունների ռացիոնալ օգտագործման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման գործընթացում միջբյուջետային հարաբերությունների կարգավորման, ՏԻՄ-ի կողմից կառավարման արդյունավետության բարձացման ինչպես նաև ավագանու ինստիտուտի կայացման նոր մոտեցումներ:

3. Վիճակագրական և տնտեսաչափական գործիքակազմի կիրառմամբ, առաջարկվել է տեղական բյուջեների եկամուտների համալրմանն ուղղված հետազոտությունների իրականացման մեթոդական մոտեցում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը ներկայացված է 147

էջում, ներառյալ գրականության ցանկը: Ատենախոսությունում ընդգրկված են 19 գծապատկեր, 18 աղյուսակ, 5 դիագրամ և 5 հավելված:

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյուքները, ինչպես նաև ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները եվ դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում անդրադարձ է կատարվել տեղական ինքնակառավարման համակարգի նպատակին և խնդիրներին, ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման համակարգը, որպես տարածքային համաչափ զարգացման հիմնական գործոն, ինչպես նաև վերլուծվել է տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման և զարգացման միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում և դրա զարգացման հիմնախնդիրները»** գլխում ատենախոսը ներկայացնում է Հայաստանի վարչատարածքային բաժանման համակարգի փոփոխությունները շուկայական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակահատվածում, համայնքների խոշորացումը, որպես տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր գործոն, ինչպես նաև համայնքների ֆինանսական հնարավորությունների ընդլայնման խնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ **«Տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում, ատենախոսը գնահատել է տեղական ինքնակառավարման ներկա վիճակը Հայաստանում, միջբյուջետային

հարաբերությունների կատարելագործման հնարավոր ուղիները, ինչպես նաև համայնքների զարգացման հիմնական ուղղությունները

Ատենախոսության եզրակացություններում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ առկա են նաև դիտողություններ, որոնք շարադրված են ստորև.

1. Աշխատանքում ատենախոսը հիմնականում օգտվել է պաշտոնական վիճակագրական տվյալներից, այնինչ աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե լրացուցիչ տվյալներ հավաքագրվեր նաև առաջնային աղբյուրներից (մասնավորապես. հարցումներ և քննարկումներ ուղղված տարածքային կառավարման մարմինների տեսակետների, ինչպես նաև համայնքների բնակիչների տեսակետների բացահայտմանը և այլն):

2. Ատենախոսն աշխատանքում իրականացրել է էկոնոմետրիկ վերլուծություն և կանխատեսումներ, որը վերաբերվում է համահարթեցման հարցին, հատկապես դոտացիաների տրամադրմանը, սակայն որի արդյունքների տեղայնացումը չի արտացոլվել: Ավելին, ներկայումս, կարևորվում է համահարթեցման-դոտացիոն մոտեցումից անցում դեպի սուբվեցիոն ծրագրերի իրականացում: Համահարթեցման դոտացիոն մեխանիզմերը, որոնք հասցեական չեն և չունեն հստակ նպատակային նշանակություն, ցանկալի է փոխարինել առավել նպատակային արդյունք ապահովող մեխանիզմերով՝ սուբվենցիոն ծրագրերով: Աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե ատենախոսը մշակեր և ներկայացներ այլ էկոնոմետրիկ մոդելների միջոցով ստացված կիրառելի արդյունքներ:

3. Բազմաբնակարանային շենքերի կառավարման խնդիրները, իհարկե, կարելի է դասել ՏԻՄ համակարգի կատարելագործմանն առնչվող

խնդիրներին, բայց դրանք ածանցիալ կերպով են առնչվում տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը: Աշխատանքի եզրակացություններ բաժնում շեշտադրում անել և մեծ տեղ հատկացնել այս հարցին, ըստ մեզ, տեղին չէ և առանձնապես չի նպաստել աշխատանքի որակի բարձրացմանը: Բացի դրանից բազմաբնակարանային շենքերի կառավարմանն առնչվող խնդիրները վերաբերվում են հիմնականում խոշոր քաղաքային համայնքներին և այս դեպքում ևս ածանցիալ ազդեցություն ունի ընդհանուր համակարգի կատարելագործման վրա: Այս ֆոնին անդրադարձ չկա գյուղական բնակավայրերի գերակշռություն ունեցող համայնքներին բնորոշ խնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

4. Ատենախոսը ՏԻՄ համակարգի կատարելագործման հիմքերից մեկը համարում է տեղական տուրքերի ավելացումը, սակայն բացակայում է տեղական բիզնեսի վրա դրա ազդեցության տնտեսական գնահատակը: Ուստի ատենախոսը խնդրին մոտենում է միակողմանի՝ ՏԻՄ ֆինանսական ռեսուրսների ավելացման տեսանկյունից, որի դրական հետևանքները կարող են ունենալ կարճաժամկետ դրական ազդեցություն:

5. Առաջարկություններում հիմնականում բացակայում է առաջարկություն-կանխատեսվող արդյունք մոտեցումը, ինչը դրանք դարձնում են խոցելի:

6. ՏԻՄ ոլորտի ներկա իրողությունները պայմանավորված են իրականացված համայնքների խոշորացմամբ և դրանից բխող հետևանքներով, սակայն աշխատանքում շատ քիչ տեղ է հատկացված այս հարցերի պարզաբանմանը, ինչի արդյունքում կատարված եզրահանգումների օբյեկտիվության և պրակտիկ առումով օգտակարության աստիճանը որոշակի նվազում է:

7. Քննարկման հարցերին վերաբերող վիճակագրական տվյալները ընդհանրացված են, ինչը հնարավորություն չի տալիս տեսնելու խնդիրները ըստ առանձին տարածաշրջանների և համայքների, հետևաբար եզրահանուգմները

ևս ընդհանրական են, իսկ տեղայնացման դեպքում էլ արդյունավետության հետ կապված լուրջ ռիսկեր կարող են առաջանալ, մասնավորապես, աշխատանքում առանձին ուսումնասիրման առարկա է տարածքային համաչափ զարգացումը, սակայն այդ հարցի անդրադաձն առանց առանձին տարածաշրջանների համայնքների ուսումնասիրման, կարող է հանգեցնել չհիմնավորված եզրահանգումների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր Մերուժանի Օթարյանի **«Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է, որն ուղղված է ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրների վերհանմանը և դրանց լուծման ուղիների առաջադրմանը:

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում ստացված արդյուքները և դրանում ներկայացված առաջարկությունները կարող են ծառայել տեղական ինքնակառավարման ոլորտի և ամբողջ համակարգի հետագա զարգացման նպատակներին: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կարող են աջակցել ՀՀ վարչատարածքային բարեփոխումների արդյունավետ կազմակերպմանը և իրականացմանը, ինչպես նաև բարձրացնել ՏԻՄ-ի արդյունավետությունը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրատարակված 6 (վեց) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին ու ունեն բավարար ընդգրկունություն:

Մեր Մերուժանի Օթարյանի **«Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմնագիրն ու թվով 6 (վեց) գիտական հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը արժանի է Ը. 00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հ.Ս. ԾՊՆԵՑՅԱՆ**

ՀԱԱՀ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Հ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱԱՀ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հրաչյա Սերգեյի Ծպնեցյանի, Հասմիկ Վաղինակի Հովհաննիսյանի, Արման Համլետի Հարությունյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՎԱԳՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՎԱՐՈՒԺԱՆԻ**

գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

21 հոկտեմբերի 2024թ.